

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3

ԳՊՄԻ պատմաբանասիրական ֆակուլտետի խորհրդի 24. 10. 2014թ. նիստի՝

մասնակցությամբ խորհրդի 16 անդամների,

նախագահությամբ ղեկան Ս.Հայրապետյանի

- ՕՐԱԿԱՐԳ - 1. Պատմաբանասիրական ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների 2013-2014 ուստարվա հաշվետվություններ
2. Պատմաբանասիրական ֆակուլտետի 2013-2014 ուստարվա հաշվետվություն
3. Ֆակուլտետի առկա համակագի ուսանողների 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի առաջին միջանկյալ ստուգումների հարցատոմսերի հաստատում
4. Առկա 4-րդ կուրսերի ուսանողների 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի ուսանողական պրակտիկաների վայրերի հաստատում ըստ ուսանողների եւ դասախոսների
5. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների վարիչների հաշվետվությունները ամբիոնների 2013-2014 ուստարվա գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ե.Վարդանյան, Գ.Խաչիկյան, Մ.Խաչատրյան Ն.Ավետիսյան, Ա.Հովհաննիսյան, Ս.Կուրազյան, Ս.Հայրապետյան

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Քննարկման արդյունքներով հավանություն տալ ֆակուլտետների մասնագիտական ամբիոնների 2013-2014 ուստարվա աշխատանքային գործունեությանը և այն գնահատելով բավարար:

2. Ամբիոնների վարիչների ուշադրությունը կենտրոնացնել այն իրողության վրա, որ ամբիոնի գործունեության հաշվետվությունը պետք է կատարվի նախորդ տարվա արդյունքների հետ համեմատության հիմքի վրա:

3. Ձեռնարկել միջոցառումներ, որոնք կնպաստեն ամբիոններում բացարձակ առաջադիմության բարձրացմանը:

4. Ամենալուրջ ուշադրության արժանացնել կուրսային, դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական ավարտաճառերի թեմաների ընտրության հարցերը, նպաստել դրանցում ուսումնական խորհրդատուների դերի ակտիվացմանը:

5. Աշխատանք տանել ֆակուլտետային ուսանողական խորհրդի աշխատանքների ակտիվացման ուղղությամբ՝ նկատի ունենալով այս կառույցի՝ որպես ուսանողների ինքնավարության մարմնի, կարեւորագույն դերը ուսանողական կյանքի ավելի ակտիվացման գործում:

6. Պահանջել ամբիոնի վարիչներից խստորեն վերահսկել ՄԿԾ-ների կատարման ընթացքը, թեմատիկ օրացուցային պլանների իրականացումը եւ դրանց համապատասխանեցումը մատյանների գրառումներին, դասախոսների կողմից գրանցումների կատարմանը, ամբիոնների փաստաթղթաշրջանառությանը:

7. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վերացնելու այն թերություններն ու բացթողումները, որոնք նկատվել են ամբիոններում Որակի կենտրոնի եւ ՈԻՄ վարչության ստուգումների արդյունքում:

8. Պահանջել ամբիոնների վարիչներից՝ խստիվ հետեւել ընթացիկ ստուգումների կատարմանը, դրանց հարցաշարերի ճիշտ կազմությանը, աշխատանքների որակական կողմի ապահովմանը, ստուգման օբյեկտիվությանը:

9. Ամբիոնների կողմից վերոնշյալ աշխատանքների վերհսկողությունը հանձնարարել ֆակուլտետի դեկան Ս.Հայրապետյանին

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի դեկանատի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվության մասին /հաղ.՝ դեկան Ս.Հայրապետյանի/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Խաչիկյան, Ս.Խաչատրյան, Ա.Հովհաննիսյան, Ս.Կուրազյան,

ՈՐՈՇԵՑԻՆ - Նկատի ունենալով այն, որ ֆակուլտետի 2013-2014 ուստարվա հաշվետվությունը նախատեսված է քննարկել ինստիտուտի գիտական խորհրդի դեկտեմբերյան նիստում, ֆակուլտետի դեկանի հաշվետվությու-

նը ֆակուլտետային խորհրդում տեղափոխել եւ քննարկել ինստիտուտի 80-ամյակի հանդիսություններից հետո՝ նոյեմբերի երրորդ տասնօրյակին **ԼՍԵՑԻՆ** - Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ֆակուլտետի առկա համակազմի ուսանողների 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի առաջին միջանկյալ ստուգումների հարցատոմսերի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մ.Խաչատրյան, Գ.Խաչիկյան, Ե.Վարդանյան

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել մասնագիտական ամբիոնների կողմից խորհրդի քննարկմանը ներկայացված ֆակուլտետի առկա համակազմի ուսանողների 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի առաջին միջանկյալ ստուգումների հարցատոմսերը:

ԼՍԵՑԻՆ - Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ֆակուլտետի առկա 4-րդ կուրսերի ուսանողների 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի ուսանողական պրակտիկաների վայրերն ըստ ուսանողների եւ դասախոսների հաստատելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ե.Վարդանյան, Մ.Խաչատրյան, Գ.Խաչիկյան, Ա.Հովհաննիսյան, Ս.Կուրազյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների կողմից ներկայացված առկա 4-րդ կուրսերի ուսանողների 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի նոյեմբեր ամսվա ընթացքում անցկացվելիք ուսանողական պրակտիկաների վայրերը ըստ ուսանողների եւ դասախոսների:

Ընթացիկ հարցերից՝

ԼՍԵՑԻՆ - Դեկան Ս.Հայրապետյանի առաջարկը ինստիտուտի 80-ամյակի առթիվ ֆակուլտետի երկարամյա աշխատանքային կենսագրության տեր մի շարք դասախոսների պարգևատրումների ներկայացնելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Խաչիկյան, Ա.Հովհաննիսյան, Գ.Հարությունյան, Գ.Կարապետյան, Ե.Վարդանյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել դեկան Ս.Հայրապետյանի առաջարկը՝ ինստիտուտի 80-ամյակի կապակցությամբ ֆակուլտետի երկարամյա աշխատանքային

կենսագրություն ունեցող հետեւյալ աշխատակիցներին պարգևատրումների ներկայացնելու մասին.

1. Կուրազյան Սերգեյ՝ հայ գրակ. ամբիոնի դոցենտ,
2. Հակոբյան Անահիտ՝ հայ գրակ. ամբիոնի դոցենտ,
3. Նահապետյան Անահիտ՝ հայ գրակ. ամբիոնի դոցենտ,
4. Նորիկյան Անահիտե՝ հայ գրակ ամբիոնի դասախոս,
5. Խաչիկյան Գագիկ՝ հայ գրակ. ամբիոնի վարիչ,
6. Վարդանյան Ելենա՝ պատմ. եւ իրավագիտ. ամբիոնի վարիչ,
7. Հովհաննիսյան Լենա՝ պատմ. եւ իրավագիտ. ամբիոնի դասախոս,
8. Պետրոսյան Սարգիս՝ պատմ. եւ իրավագիտ. ամբիոնի դոցենտ,
9. Նիկողոսյան Արթուր՝ պատմ. եւ իրավագիտ. ամբիոնի դասախոս,
10. Հովհաննիսյան Արտակ՝ պատմ. եւ իրավագիտ. ամբիոնի դոցենտ,
11. Հարությունյան Մելինե՝ պատմ. եւ իրավագիտ. ամբիոնի դասախոս,
12. Խաչատրյան Մարիետա՝ հայոց լ. ամբիոնի վարիչ,
13. Մելքոնյան Սենեքերիմ՝ հայոց լ. ամբիոնի պրոֆեսոր,
14. Ավետիսյան Նազելի՝ հայոց լ. ամբիոնի դոցենտ,
15. Մելքոնյան Հովիկ՝ հայոց լ. ամբիոնի դոցենտ,
16. Զաքյան Հրանուշ՝ հայոց լ. ամբիոնի դոցենտ,
17. Գասպարյան Ֆրոսյա- ֆակուլտետի դոնապահ

ԼՍԵՑԻՆ - Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ֆակուլտետի հեռակա ուսուցման կուրսերի առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի դեկանատի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մ.Խաչատրյան, Ս.Պետրոսյան, Գ.Խաչիկյան, Ա.Մնացականյան, Ե.Վարդանյան

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. 2014-2015 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի նախապատրաստման ուղղությամբ դեկանատի աշխատանքը գնահատել բավարար:

2. Նկատի ունենալով լսարանների սղությունը՝ հեռակա ուսուցման չորրորդ եւ հինգերորդ, ինչպես նաեւ «գրադարանային գործ» մասնագիտու-

թյան առաջին կուրսերի ուսումնական գործընթացը տեղափոխել եւ անցկացնել դեկտեմբերի 1-27-ը:

ԼՍԵՑԻՆ - Հայոց լեզվի եւ գրականության չորրորդ կուրսի ուսանողուհի Ռ. Սարգսյանի եւ պատմ. չորրորդ կուրսի ուսանող դիմումները մանկավարժական պրակտիկան բնակավայրի դպրոցում անցկացնելու թույլ տվություն տալու մասին /հաղ.՝ դեկան Ս.Հայրապետյանի/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ե.Վարդանյան, Մ.Խաչատրյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Նկատի ունենալով, որ դիմումատու ուսանողուհիները նոր են ամուսնացել եւ բնակվում են հարեւան Վրաստանի հայաշատ բնակավայրերում, որտեղ գործում են հայկական դպրոցներ, բացառության կարգով թույլատրել մանկավարժական պրակտիկան անցկացնելու՝

1. Ռուզաննա Սարգսյան- ՀԼԳ 4-րդ կ.՝ Վրաստանի Մառնեուլի շրջ.

Կարմիր գյուղի հայկական միջնակարգ դպրոցում:

2. Մարիամ Մխիթարյան- պատմ.4-րդ կ.՝ Արագածոտնի մարզի Արտենի գյուղի միջնակարգ դպրոցում:

Խորհրդի նախագահ՝

Ֆակուլտետի դեկան

նիստի քարտուղար

Ս. Հայրապետյան

Է. Չոբանյան